12

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

**«08» սեպտեմբերի 2020 թվական N 134-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ՝ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ՑՈՒՑԱՍՐԱՀԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատի ունենալով, որ քանդակագործ Ֆրիդ Սողոյանի ժառանգները ցանկություն են հայտնել Գյումրի քաղաքին նվիրաբերել քանդակագործի ստեղծագործությունների մի մասը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով քանդակագործի ժառանգների համայնք ղեկավարին ուղղված դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2020 թվականի սեպտեմբերի 01-ին՝ N 12231 թվագրմամբ) և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ենթակայության՝ քանդակագործ Ֆրիդ Սողոյանի հուշատուն-ցուցասրահ և այդ նպատակի համար հատկացնել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 14072014-08-0014) Սաշա Համբարձումյան փողոց N 35 հասցեի 332,75 (երեք հարյուր երեսուներկու ամբողջ յոթանասունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով նախկին գրադարանի շենքը և շենքի պահպանման ու սպասարկման համար զբաղեցված 0,051642 (զրո ամբողջ հիսունմեկ հազար վեց հարյուր քառասուներկու միլիոներրորդական) հեկտար մակերեսով հողամասը:
2. Համայնքային ենթակայության քանդակագործ Ֆրիդ Սողոյանի հուշատուն-ցուցասրահի ստեղծման, հատկացված շենքի վերանորոգման, օգտագործման պայմաններն ու պահանջները մանրամասնել համայնքի ղեկավարի որոշումներով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (25)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

**Ս. Բալասանյան**
**Ա. Ադամյան**
**Հ. Կարապետյան**
**Լ. Խաչատրյան**
**Տ. Հովհաննիսյան**
**Մ. Սահակյան**
**Լ. Սանոյան**
**Վ. Եղիգարյան**
**Ա. Գրիգորյան**

Կ. Միքայելյան
Տ. Փանոսյան
Գ. Գրիգորյան
Կ. Թաթարյան
Ս. Աստոյան
Ա. Խաչատրյան
Ռ. Սարգսյան
Ա. Մխիթարյան
Ս.Մարտիրոսյան
Լ. Բարսեղյան
Ա.Վարդանյան
Ա. Գրիգորյան
Ա. Խաչատրյան
Գ. Մաթևոսյան
Ա. Ղարաղազարյան
Հ.Պողոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ ԻՍԿԱԿԱՆԻՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ Կ.ԲԱՂԴԱՍՅԱՆ

քաղաք Գյումրի
«08» սեպտեմբերի 2020 թվական